

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/3

13 հուլիսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 03.07.2012թ-ի նիստում քննության է առնվել <Հիմնարար հետազոտությունների կենտրոն> ՓԲԸ վարչական բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 14.06.2012թ. թիվ 1206962 արձանագրության դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ արձանագրությունը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 31.05.2012թ. թիվ 1206962 հանձնարարագրի, <Հիմնարար հետազոտությունների կենտրոն> ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած դեբետային մնացորդի ուսումնասիրություն: Արդյունքում 14.06.2012թ-ին կազմվել է թիվ 1206962 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է հետևյալը:

<Հիմնարար հետազոտությունների կենտրոն> ՓԲԸ կողմից ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով 01.07.2011-30.04.2012թթ ընկած ժամանակաշրջանի համար 23.05.2012թ. ՀՏ ներկայացրած դիմումով հաշվանցման և (կամ) վերադարձման ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը կազմում է 34.734.000 դրամ: Համաձայն Կենտրոնի ՀՏ հետ կնքված փոխադարձ հաշվարկների ստուգման տեղեկանքի, ընկերության ԱԱՀ-ի դեբետային մնացորդը 25.05.2012թ. դրությամբ կազմում է 978.442.545 դրամ:

Ներկայացված սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընկերության ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրացման շրջանառությունը կազմում է 173.670.000 դրամ, որին հասանելիք (20% հաշվարկային) ԱԱՀ-ի գումարը համաձայն <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի, կազմում է 34.734.000 դրամ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի համար ընկերության կողմից ՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով ցույց է տրվել միայն բյուջե վճարման ենթակա ԱԱՀ՝ գումարով 46.699.021 դրամ: Այսինքն, ուսումնասիրվող ժամանակաշրջանում ըստ ՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների հաշվանցման (դեբետ) ենթակա ԱԱՀ-ի գումար չի առաջացել:

Այսպիսով՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանում դիմումով պահանջված 34.734.000 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը ենթակա չէ սահմանված կարգով հաշվանցման և (կամ) վերադարձման:

<Հիմնարար հետազոտությունների կենտրոն> ՓԲԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ընկերությունը գտնում է, որ կազմված արձանագրությունը չի բխում օրենքի պահանջներից և գրկում է ընկերության իրավունքի իրականացումից հետևյալ պատճառաբանությամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի, նույն՝ հոդվածի 2-րդ մասի <բ> կետի և գործի փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ 14.06.2012թ. թիվ 1206962 արձանագրությունը հանդիսանում է միջամտող վարչական ակտ, որով մերժվել է ընկերությանը տրամադրել ԱԱՀ-ի մասով հաշվանցման և /կամ վերադարձման/ ենթակա գումարը:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի <ա> կետի, նույն հոդվածի 4-րդ մասի, 56-րդ հոդվածի, 57-րդ հոդվածի

1-ին մասի դրույթների և 14.06.2012թ. թիվ 1206962 արձանագրության համադրման արդյունքում գալիս ենք եզրահանգման, որ արձանագրությունը չի համապատասխանում օրենքի պահանջներին: Մասնավորապես.

Արձանագրությունում բացակայում է պատճառաբանական մասը: Վարչական մարմնի կողմից չեն նշվել ընկերության ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով առաջացած ԱԱՀ-ի գումարի վերադարձը մերժելու ինչպես իրավական, այնպես էլ փաստական հիմքերը: Մինչդեռ հարկային մարմինը պարտավոր էր իր կողմից ընդունված վարչական ակտում նշել այն բոլոր իրավական դրույթները և փաստական հանգամանքները, որոնց հիման վրա մերժում է ընկերության իրավունքի տրամադրումը:

Բացի այն, որ վարչական ակտում բացակայում է պատճառաբանական մասը, դրանում նշված չեն նաև ակտի բողոքարկման ժամկետը և այն մարմինը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել: Արձանագրության բովանդակությունից տպավորություն է ստեղծվում, որ վարչական մարմինն ընկերությանը գրկում է իր իրավունքների վերաբերյալ ընդունած վարչական ակտը վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու հնարավորությունից: Միաժամանակ ակտում բացակայում է ակտն ընդունած վարչական մարմնի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կնիքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ, 69-77-րդ հոդվածների դրույթներով՝ խնդրում ենք ամբողջությամբ բավարարել վարչական բողոքը և անվավեր ճանաչել ԿԱ ՊԵԿ 14.06.2012թ. թիվ 1206962 արձանագրությունը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ով սահմանված կարգի 9-րդ կետի համաձայն. «Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա է սույն կարգի 6-րդ կետին համապատասխան որոշվող՝ ԱԱՀ-ի դեբետային մնացորդի (այսուհետ՝ ԱԱՀ-ի դեբետային մնացորդի) այն մասը, որը չի գերազանցում այդ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների հարկվող շրջանառության 20 տոկոսը»:

Քննարկվող դեպքում ուսումնասիրվող ժամանակաշրջանի համար ընկերության կողմից ՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով ցույց է տրվել միայն բյուջե վճարման ենթակա ԱԱՀ (կրեդիտային շրջանառություն)՝ գումարով 46.699.021 դրամ: Այսինքն, ուսումնասիրվող ժամանակաշրջանում ըստ ՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումար (դեբետային շրջանառություն) չի առաջացել:

Իր հերթին, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ով սահմանված կարգի 10-րդ կետի համաձայն. «Եթե որևէ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ԱԱՀ-ի դեբետային մնացորդը գերազանցում է գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարը, ապա գերազանցող մեծությունը վերագրվում է հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններին: Գերազանցող մեծությունը համարվում է վերագրված հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններին, եթե այն հաշվի է առնվում որևէ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ԱԱՀ-ի գումարը որոշելիս (եթե այդ գումարը ներառված է հարկ վճարողի դիմում ներկայացնելու օրվա դրությամբ ԱԱՀ-ի դեբետային մնացորդում)»:

Քննարկվող դեպքում նախորդ ուսումնասիրությունների արդյունքում հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններին վերագրված ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարներ չեն արձանագրվել:

Վերոգրյալից հետևում է, որ ուսումնասիրված ժամանակաշրջանում <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի հավելված 1-ով սահմանված կարգի 9-րդ և 10-րդ կետերի պահանջների չբավարարման հանգամանքը հիմք է հանդիսացել ընկերության դիմումով պահանջված 34.734.000 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդը սահմանված կարգով հաշվանցելու և (կամ) վերադարձնելու իրավունքը մերժելու համար:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Արձանագրությունը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ